

# Գ Ա Յ Յ Ր Ե Ն Լ Ի Բ

10  
Փարայ

## ՕՐԱԹԵՐԹ

10  
Փարայ

### ԱԶԳԱՅԻՆ ԻՍԿԱՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Հայրենիք ամեն օր կը հրատարակուի, տարեկան գինն է Պոլսոյ եւ գաւառաց համար 7 արծաթ մեծիտ կանխիկ. գաւառական քղրատարութեան ծախքը մեր վրայ է: Վեցամսեայ եւ եռամսեայ բաժանորդք ալ կը գնդուցուին:

Լրագրոյս վերաբերեալ գիր կամ նամակ պէտք է ուղղել առ Տէր-Խմբագիր Ռիզա փաշա խան Թ. 14: Խմբագրութեան ուղղեալ գիր ետ չէ տրուիր: Ծանուցման տողը մեկ անգամի համար 3 դրոշ է. սակայն անգամի համար սակարկութիւն կը լլայ:

### Ն Ե Ր Ք Ի Ն

Գաղղիա թուրքոյ նոր զորաբաժին մը զրկելու պատրաստութիւն կը տեսնէ: Եթէ հրատարակութեանց հաւատալ պէտք է, այս ձեռնարկութեան նպատակն է թուրքոյ պէյը զահրնկէց ընել և թուրքոյ բովանդակապէս Գաղղիոյ յանձնել: Մօրնինկ փոսթ կը թէ թուրքոյ դաղղիական պաշտօնեայ Պ. Բուսթան այս խորհուրդը տուեր է իւր կառավարութեան:

Վիեննայի Գորէսփօնտանս փօրթիկը լրագիրը ընդհակառակն կըսէ թէ Պ. Բուսթան իւր կառավարութեան խորհուրդը տուեր է որ Տրիպոլսոյ Օսմ. իշխանութեանց հետ լաւ յարաբերութիւն հաստատէ և Անգղիոյ հետ ունեցած բարեկամութիւնը չխանգարէ:

Միւս կողմանէ այնպէս կը կարծուի թէ թուրքոյ պէյին զահրնկէցութիւնը արարական ապստամբութեան առաջն առնուլ բաւական չէ. մանաւանդ թէ Գաղղիա թուրքոյ զրաւելուլ աւելի բան մը չկրնար շահիլ, քանի որ Պարսոի դաշնագրութեամբ թուրքոյ մէջ բացարձակ ղադտութիւն կը վայելէ:

Աւստրիոյ և Բուսթանիոյ մէջ ժամանակէ մ'ի վեր ծագած ցրտութիւնը Անտրալի կոմսին ի Բուսթանիա այցելութեամբը փարատած կերևի. հետեւաբար Բէշթայի և Պուքրէշի լրագիրները զիրար ամբաստանելէ ալ ևս պիտի դադրին:

Աւստրիոյ լրագիրները այս առթիւ խորհուրդը կուտան Բուսթանիոյ որ ու է տէրութեան մը մանաւանդ Ռուսիոյ հետ դաշնակցելու հետամուտ չը լինի. վասն զի Ռուսիոյ հետ դաշնակցելը Բուսթանիոյ համար կորուստէ զատ նշանանակութիւն չկրնար ունենալ: Բուսթանիոյ յառաջդիմութիւնը, կը յաւելուն յիշեալ թերթերը, չէզոքութեան մէջ կը կայանայ միայն:

Ս. Փեթրսպոլիէն կը հեռագրեն թէ Ռուսական կառավարութիւնը իւր դեսպաններուն շրջաբերական մը զրկելով, երկու կայսերաց Տանցիկի մէջ ըրած տեսակցութեան վրայ անոնց ուշադրութիւնը հրաւիրեր և յայտարարեր է թէ Գերմանիա և Ռուսիա սոյն տեսակցութեան նոր կապուած են երկու կառավարութեանց շահուն և երկու պարտիոյ խաղաղութեան համար:

Երբ է թէ Գերմանիա և Ռուսիա սոյն տեսակցութեամբ բարեկամական նոր կապուլ մը կապուած են երկու կառավարութեանց շահուն և երկու պարտիոյ խաղաղութիւնը անայլայլ պահելու համար:

— Մէնէլա Նէկրօփօնթ անուն յոյն մը Աթէնքի աղքատ հիւանդներուն համար 4000 ֆրանք նուիրեր է:

— Կիպրոսի մէջ 40 աստիճանաչափ տաքութիւն ըլլալով, ժողովուրդը սաստիկ կը նեղէ եղեր:

— Անցեալ տարի զրոյց ելած էր թէ մայրաքաղաքիս աւստրիական դեսպանատան քարտուղար Մօնթէլա դուքսը քանի մը դեսպանական գրութիւններ գողցած էր և այն առնին ի վեր զիւսանդիտական ասպարեզէն քաշուած էր: Բէշթայի լրագիրները այս օրերս կը ծանուցանեն թէ դուքսը հունգարացի սպայի մը հետ մենամարտելով վիրաւորուեր է:

— Տօլմագլաչի արքունի օրհոռն օր այրեացաւ և իւր քանի մ'օր առաջ, նորոգիլ սկսեր է: Հրդեհին պատճառներուն քննութիւնը կը շարունակէ:

— Քանի մը շաբաթ առաջ զրած էինք թէ երիտասարդ Տաճիկ մը իւր գեղանի կնոջ առնական զգեստ հագցնելով պտտուելու ելած էր անոր հետ և ի վերջոյ բռնուած:

Սթամպուլ կըսէ թէ սոյն երիտասարդը մէկ ամիս բանտարկութեան դատապարտուեր է:

— 10 հոգիէ բաղկացեալ խումբ մը ծխախոտ փախուցած և Նէրտիվէնքէոյի կողմերը Օսման անուն քօլճիի մը հանդիպած ըլլալով, այս վերջինը իւր ընկերաց օգնութեամբ յաջողեր է անոնց ձեռքը գտնուած 50 քաշ ծխախոտը առնելէ վերջը զանոնք ցիրուցան ընելու:

— Եանեայի զինուորական հրամանատար Մէհմէտ Զեքի փաշա քանի մը կարևոր դործերու կարգադրութեան համար Մէցօլա գացեր է:

— Բըշթայի կառավարիչ Ապտիւր-Րէֆի Էֆէնտի Մարկարթի ելթալու հրաման ընդուներ է, հոն ծագած կըռուի մ'առաջն առնուլ համար յորում քանի մը հողի մեռեր են:

— Շիրքէթի-Խայրիէ ընկերութեան

նորոգ. տնօրէնութիւնը, այն է ճամբորդաց տոմսակները փոխանակ շոգենակի կամուրջի վրայ տալու որոշումը մեծ անկարգութեանց պատճառ սկսեր է ըլլալ, վասն զի ժողովուրդը կը պարտաւորի եղեր շոգենակէն դուրս մնալու:

— Հետեւեալը բարեգործութեան գեղեցիկ օրինակ մը կրնայ համարուիլ:

Մայրաքաղաքիս սպանիական նախօրդ դեսպան Վիլլա Մանթիլա մարզիզը լաիկ միջիկ ողորմութիւն տալու վարժուած անձ մ'էր: Օր մը այրի կին մը դեսպանին ներկայանալով, անոր զթուլութիւնը կը խնդրէ իւր զաւակաց համար: Գեսպանը խնդրուիլ կընը սիրով ընդունելով, կաղաչէ անոր որ իւր զաւակաց օգտին համար մուրալէ դադրի և կը յայտնէ անոր թէ որքան ատեն որ իւր դեսպան մայրաքաղաքս մնայ, օքը կէս օխա հաց, կէս օխա միս, ամիսը մէկ ոսկի, կէս օխայ խահուէ և երկու օխայ կարագ իւր կը: Ետմանէ ի վեր Մարզիզը նրա մայրաքաղաքէս մեկնեցաւ, 110 ոսկի յանձնեց ապահով տեղ մը որպէս զի այրի կինը կարող ըլլայ. իւր (դեսպանին) սահմանած այս նուէրը կանոնադրապէս անկէ ընդունիլ:

Հաւանական է որ ազնիւ Մարզիզը ասոր նման տակաւին շատ բարեգործութիւններ ըրած է, որը դաղտնի մնացած են և պիտի մնան անշուշտ:

Վեհափառ Սուլթան Համիտ կայսեր գահակալութեան տարեդարձն անցեալ եօթնեկի շրեքշարթի օրը շքեղապէս կատարուեցաւ քաղաքիս մէջ: Նոյն օրը առաւօտուն կանուխ թնդանթայ օրոտմունք աւետեցին սոյն հանդէսն. և անմիջապէս հիւպատոսարանը և մեր նաւահանդիստն զտնուող նաւերն իրենց յառուկ դրօշակներով զարգարուեցան: Մեր ընդհանուր կառավարիչ Բարձր Ալի փաշա նոյն օրը ընդունեց ամեն աղքատ հոգևոր զլուսներու, հիւպատոսական, և ուրիշ պաշտօնատանց բարձրաստիճան անձանց սովորական այցելութիւնը: Երեկոյն քաղաքիս համայն պաշտօնատուներ և հիւպատոսարանը ճըրագալոյցի ալ և ալ զեղարուեստից լոյսերով զարգարուած էին՝ յորս լուսա-



պայծառ կը շողջողային տեղական կառավարութեան պաշտօն, քարափանց վրայ մաքսատունը, քարափանց ընկերութեան, հասարակաց առողջութեան խորտիվիէ ընկերութեան գրասենեակներըն, մանաւանդ Պ Տիւսօ եղբարց տան արեւմտեան երեսը, և քարափանց գրեթէ բոլոր սրճարաններն ու ճաշարանները, Պ. Տիւսօ եղբարց տան վրայ գաղղիերէն «կեցցէ Սուլթան» լուսեղէն տառերն կը ճաճանչէին: Յատկապէս Գաղղիայէն բերել տրուած այլ և այլ ճարտարարուեստ հրավառու ժիւղիք ծովուն վրայ հրեղէն կամարներ կը յօրինէին, և այս կամարներէն լուսեղէն անձրևի անհամար կաթիլներ ծովուն վրայ կը ցընցըղէին: Նոյն գիշերի օգին պայծառութիւնն առաւել փայլ կաւելցնէր հանդիսին շքեղութեան վրայ: Կարծես ամբողջ քաղաքը ոտրի վրայ էր. քարափանց հըրապարակն անբաւական կը դառնար շրջագայող բազմութիւնն պարունակելու, որք և լուսագօտի թրամուռներով կերթնեկէին:

Այսպէս ահա սովորականէն աւելի և հասարակաց ակնկալութենէ վեր շքեղութեամբ կատարուեցաւ այս տարի Վեհ. Սուլթան Համիտ մեր բարեխնամ կայսեր Գոհակալութեան տարեգարձն:

— Ս. յարնի երկաթուղւոյ գծին մօտ Թրիանտա և Թուրպայը կոչուած գիւղերուն արուարձանները տաճկի մը յարկին ներքեւ երկու որսորդներ հանգիստ կառնուին անցեալ եօթնեկէ հինգշաբթի օրը, սոյն երկու Յոյն որսորդաց մին Ձմիւռնիոյ վարժապետաց դասէն, իսկ միւսն Թրիանտա գիւղի բնակիչներէն էր: Վեց չարագործներէ բաղկացեալ խումբ մի յանկարծ սոցա վրայ կը յարձակին հրացան ի ձեռին: Գիւղացւոյն ձեռքերը կը կապեն և վարժապետին հետ միասին կը տանին մօտակայ լեռները: Հետեւեալ առաւօտ գիւղացիին նամակ ի ձեռին կը վերադառնայ յորում չարագործաց գլխաւորն վարժապետը արձակելու համար 1000 լիւրայ վերկանք կը պահանջէր: Վարժապետին հրացանն ու որսական հագուստն երկու շաբթի իրիկուն նորա բարեկամաց միոյն ձեռքն անցաւ: Տեսնենք թէ չարագործաց տեսարաններու սոյն վարագոյրն ինչպէս պիտի դոցուի:

(Արշալոյս)

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒԻՐԵՐ

Ինչպէս քանի մ'օր առաջ գրած էինք, ուրախ եմք լսելով որ Կիլիկիոյ կաթողիկոսական խնդիրը համաձայնութեան ճամբուն մէջ մտեր է:

Կիրակի օր Օրթոդոքսիալ գաւառեալ ժողովին մէջ ուր Ս. Պատրիարք Հայրը և Ս. Կաթողիկոսը ներկայ կը դառնուէին, որոշուեր է որ Ս. Կաթողիկոսը թագոյր մը դրէ առ Բ. Գուռն ըսելով թէ իրեն տրուած կաթողիկոսական Պէրաթը Աղթամարայ կաթողիկոսին և Երուսաղէմի Պատրիարքին Պէրաթներուն յար և նման չէ, և իրեն Պէրաթին մէջ ինչ ինչ կէտեր թերի են, այսինքն ճիշդ այն կէտերը որք Աղղ. Պատրիարքարանի բողոքանայ նիւթ եղան վերջին օրերս իրը և Պատրի-

արքարանի և եկեղեցական դարաւոր իրաւանց խնդիր. Ս. Կաթողիկոսը այս գրով պիտի յայտարարէ որ եթէ Բ. Գուռը այս կէտերն ամբողջացնելու չընորհը չընէ, ինք (Ս. Կաթողիկոսը) չպիտի կարենայ տրուած Պէրաթն ընդունիլ: Որոշուեր է նաև որ Ս. Կաթողիկոսը նմանօրինակ դիր մ'ալ Աղղ. Պատրիարքարան ղրկէ:

Իմացանք որ Ամեն. Մկրտիչ սրբազան սոյն իմաստով գիր մը ղրկեր է երէկ ի Պատրիարքարան, ուրկէ կարելի է հետեւցնել թէ Բ. Գրան ալ հարկ եղած թագրերը ղրկած է:

Ահա այս կերպով կը բարձուին կաթողիկոսական պէրաթի մասին երևան ելած դժուարութիւնք որ բաւական զայլակալութեան նիւթ եղած էին, և խնդիրը կը մնայ միայն Սոյ կաթողիկոսութեան Աղղ. վարչութեան և էջմիածնի աթոռոյն հետ ունեցած յարաբերական մասին, զոր շատ դիւրին է կարգադրել եթէ երկու կողմն ալ խոհեմութեան միջին ընթացք մը բռնեն Աղղին և Կիլիկիոյ աթոռոյն շահերը իրենց խորհրդածութենէն չը վրկպեցնելով:

Ատանայի կուսակալութեան հրամանաւ Ատանա բերուող Հաճընցի աղղայինք որոց խնդիրն արդէն ծանօթ է հասարակութեան, Աղղ. Պատրիարքարան վերստին հեռագիր ղարկած և իրենց ազատութիւնը խնդրած ըլլալով, Պատրիարքական Գեր. փոխանորդ Հայրը երէկ Դատական գործոց վսեմ. նախարարին հետ անսակցեցաւ և ինզրեց որ Բ. Գրնէն հրամանագիր մը ղրկուի Ստանայի կուսակալութեան:

Վսեմ նախարարը խօստացաւ հարկ եղած հրամանագիրը յառաջիկայ թըղթատարաւ Ատանայի կուսակալին ղրկել:

Եօզղատի Աղղ. ժողովոց կողմանէ Պատրիարքարան զարնուած հեռագիր մը կը խնդրէ որ Պիլէճիկի առաջնորդ Գեր. Ղևոնդ եպիսկոպոս Շիշմանեան Եօզղատի առաջնորդական տեղապահի պաշտօնն ալ վարէ միանգամայն մինչև յնոր անօրէնութիւն:

Երուսաղէմի Ամեն. Ս. Պատրիարքը Յոպպէէն Երուսաղէմ դարձեր է:

Երուսաղէմի միաբաններէն Արթ. Տ. Մամրէ և Տ. Սահակ ուսումնական վարդապետը քանի մ'օրէն Ռուսաստան կը մեկնին:

Հանրածանօթ Արթ. Ճերմակեան վարդապետ ալ էջմիածին կը մեկնի իբրև միաբան հոն մնալու համար:

Պ. Թրօթթըր հաղարուպետին ի մասին Հայոց դրած մէկ տեղեկագրին վերայ կարեօր յօդուած մը ղրկուած է մեզ զոր վաղը պիտի հրատարակենք, և որուն վրայ կը հրաւիրեմք այժմէն մեր ընթերցողաց ուշադրութիւնը:

Գաւառիս Երեսփոխանական ժողովը իւր 28րդ նստին մէջ, որ դումարեցաւ ամսոյս 18 ին, ի մէջ այլոց՝ աղղկանց համար ընդարձակ վարժարանի մը կարևորութիւնն և նկատողութեան առնելով, Յանձնաժողով մի կազմեց, որոյ պաշտօնըն է աղղկանց վարժարանի յարմար գետին մը որոշել, շինութեան միջոցներն հետազօտել, և յաջողակ ճարտարապետի մը հետ խորհրդակցելով ծախուց որքանութիւնն ճշգրէ և շէնքին յատակագիծն պատրաստել, և ըստ այնմ մանրամասն տեղեկագիր ներկայացնել Գաւառական ժողովոյն:

Յայտնի է որ առանց իրական միջոցներու շէնք չկրնար կանգնուիլ. և իրական միջոցներն կամ Աղղ. արկղի ճոխութեամբ, յորմէ զուրկ կը գտնուի դժբաղդաբար, կամ առատասիրտ բարերարի մը լվհանձնութեամբ, և կամ ժողովրդային ընդհանուր հանդանակութեամբ կրնան ձեռք բերուիլ: Կը յուսամք թէ պատուարժան յանձնաժողովը իւր տեղեկագրին մէջ բացորոշ կերպիւ կը յայտնէ շէնքին ճարտարապետական ձևէն աւելի շինութեան իրական միջոցներուն ինչ և ո՞րքան լինեն:

\*\*

Աղղային վարչութեան Գաղաքական ժողովը և Տնտեսական խորհուրդն իւրենց երկամեայ պաշտօնավարութեան շրջանն լրացեալ լինելով խմբովին հրատարակելու մատուցին Ս. Նախագահին. և որոց Համարատուութեան Տեղեկագիրն ինչպէս նաև Կրօն. ժողովոյ, Ռուսումնական և Դատաստանական խորհրդոց մասին տպագրութեան տրուած է որ քիչ օրէն պիտի մատուցուի Երեսփոխանութեան:

(Արշալոյս)

ԻՄ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՔ

ԻԸ.

ՄԻԱՅԵՍԱԿ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ

Կը թողունք զմեզ մեծ անուններէ խաբուիլ քան թէ համեստ անուններով մեծ գործեր արդիւնաւորել. կրնայ ըսուիլ, այս է մեր շատերուն նկարագիրն:

Անցեալ տարի երբ Արարատեան, Արևելեան-Գաղղոցասիրաց և Կիլիկեան երեք ընկերութիւններն կը միանային, այս անուանց մէջ փոխանակ միջին և պարկեշտ անուն մ'ընտրելու, յառաջ դէպքինք մինչև իսկ «Հայոց Միացեալ ընկերութիւնք» անունը տալու այս կը թական Միութեան, որպէս թէ Աղղին մէջ ուրիշ ընկերութիւն չդառնուէր, որպէս թէ երկու երեք հազար ոսկույ (միացման միջոցին) դրամագլխով այդ ընկերութեան բովանդակ աղղին վերագրուիլը աղղային կը թական ղազմանց և վիճակին «պատիւ» մ'եղած ըլլար:

Բայց մենք անուններէ խաբուիլ կը սիրենք քան թէ գործ արդիւնաւորել:

Ճիշդ այս կարգէն էր երբ Արարատեան ընկերութիւնն Երուսաղէմ վարժապետաց ընկերութեան վանի մէջ, ի զուր որջամիտ և հեռատես զուլաներ գէմ կեցան այդ առաջարկութեան, զի բոլորովին անտրամաբան և հակատեստական էր. հե-



տևաբար երկու տարիէ ի վեր 1500 ոսկի աւելի — ընկերութեան կորոզութեան հետ բաղդատելով — մեծ կուճար մ'ի նանիր մստուելէ վերջ, այսօր փակելու առաջարկ մը բերած է Տնօրէն խորհուրդըն առ Ընդհ. ժողով:

Վարժապետանոց ըսուելու համար հարկ էր ընդարձակ կերպով մանկավարժութիւն աւանդուէր անդանօր, բայց մեր Վարժապետանոցի ուսմանց ծրագրին մէջ այդ կարևորագոյն գիտութեան սկզբունքներն իսկ բացակայ էին:

Թիթեւ պարոններ կարծեցին թէ գիւղական նախակրթութենէ տարբեր բարձրագոյն նախակրթութիւն մը տալով դպրոց մը կրնայ Վարժապետանոց ըլլալ, և ինչ ահագին ծախքեր պիտի ըլլային ուսուցչական ընտիր մարմին մը համախմբելու և կրթական բարձրագոյն միջոցներ հայթայթելու համար ինչպէս որ եղան իսկ:

Արարատեան ընկերութիւնն աւելի իմաստուն գործ մ'ըրած կըլլար, եթէ այդ Վարժապետանոցն փոխանակ ի Վան բանալու, աստ ի Պօլիս բանար և ըստ մեզ շատ յարմար կըլլար Ղալաթիոյ կերպ. (անուանական) վարժարանն, համաձայնելով թաղ. խորհրդին և կամ կառուածոց Հոգաբարձութեան հետ. — ուրոց հետ որ անկ է — ի մասին ծախուց մասնակցութեան:

Այսպէս թէ ուսուցիչներու ծախուց և թէ այլ պիտոյից մասին մեծ խնայողութիւն կըլլար և թէ աւելի արդիւնք կարտադրէր, և եթէ Վարժապետանոցն ելնող աշակերտաց անպատճառ վարժապետ ըլլալուն երաշխաւորութիւն ունինք, ոչ ապաքէն Պօլիս ալ ոչինչ նուազ պէտք ունէր վարժապետաց:

Ինչ որ է, կանցնին օրեր, կը ցնդին երազներ, կը վատնուին ոսկիներ և դառն փորձերէ վերջ իմաստուն կըլլանք, եթէ երբէք պիտի ըլլանք:

Անցեալ շաբթու Պարոն Պ. բաւական խելացի առաջարկ մը կընէր այս թերթին մէջ, այն է շարունակել Վարժապետանոցը և ծախքերն ուսանողներէ պահանջ արձանագրել, գրեցէք էֆէնտի, պահանջ անցուցէք այս ինչ պարոնէն այսչափ ոսկի, բայց ընկերութեան հաշիւ 5-6 ամսուան պաշար մնացել է, էհ, ինչ վրոյթ, թող 3000 է աւելի ուսանողաց դպրոցները դոյուին, Վարժապետանոցի աշակերտք վաղը մարդ կը ըլլան կը վատնուին պարտքերնին կուտան, ինչպէս, աղէկ չէ՞ այս առաջարկ:

Ըստ մեզ իրողութիւնն այս է որ Արարատեանը ընկերութեան կուշտին մահացու վէրք մը տուաւ, Միացեալ ընկերութիւնը դայն պիտի բուժէ:

Լրագիրը հրատարակեցին տրդէն Տնօրէն ժողովը, այստագիրն որ ընկերութեան կեդր. ժողովին ներկայացաւ:

Սոյն յայտագիրն մեր Հայաստանցի ազգայնաց կրթական յետնեալ վիճակը մէջ բերելէ զկնի, կը յարէ — «Տնօրէն ժողովը իրաց այս վիճակին գիտակից, կուգայ յայտարարել Չեղ թէ իւր յայ-

տագիր պիտի պարունակէ լոկ նախնական կրթութիւն, իւր երկու աստիճաններով, նախակրթութիւն գիւղերու համար և բարձրագոյն նախակրթութիւն կեդրոն գիւղաքաղաքներու և քաղաքներու համար:

Եւ մեք կը յարենք, աւելի պէտք է գիւղերու նախակրթութեան ոյժ տալ քան թէ կեդրոն գիւղաքաղաքներու և քաղաքներու, զի աւելորդ է յայանել որ գիւղաքաղաքներու և քաղաքներու մերադնեայք կարող են իրենք զիրենք հոգալ, եթէ ճշմարիտ է որ ժողովըրդեան հոծ բազմութիւնն աւելի գիւղերու մէջ կը բնակի որ գերադրագէտ զուրկ է կրթութենէ, ապա ուրեմն հարկ անհրաժեշտ է որ Ընկերութիւնն իւր գործունէութեան դաշտ՝ Հայաստանի գիւղերն ընտրէ, յորում Միսիօնարք և ժէղուիթք լայն արձակ ասպարէզ գըտած են, տիրոջը գործերն և իրենց շահատակութիւններն յառաջ տանելու:

Վանայ Վարժապետանոցը բաց պահելով — եթէ ընկերութեան նիւթական միջոցներն ներեն իսկ — մեծ և անքաւելի սխալ մը գործած կըլլանք, զի այսու՝ քառասուն յիսուն քիչ մը բարձր կրթութիւն առնող երիտասարդներ պիտի պատրաստենք, հազարաւոր գիւղացի պատանիներ նախակրթութենէ զրկելով:

Հարկ է աստանօր մէջ բերել և այն անտեղութիւն թէ այդ վարժապետացուներու մեծ մասն հարուստի աղաք են և արդէն 17 ուսանողներ ելեր գացեր են իրենց գործին ի հարկէ վարժապետ ըլլալու (':):

Ո՞րն է խելացի ճամբան. մէկ քանի բարձր (եթէ ներելի է այսպէս ըսել) կրթութիւն ունեցող անհատներ ունենալ, թէ ոչ շատ մը գիւղացիներ, որք զրեն, կարգան, հաշուեն, հասկնան, զգան և մանաւանդ օտար փարախներու վիհը չիյնան, որք այս միջոցիս անձարձակ կը գործեն մեր ամենէն հոծ, բայց ամենէն յետնեալ ժողովրդին մէջ:

Եւ եթէ աւելցնենք սոցա վրայ այն վիճակն յորում ընկերութիւնն կ'ըլտնուի այսօր, յիմարութիւն չըլլար ողջ ողջ գերեզման զնել զայն, որ «ՀԱՅՈՑ ՄԻԱՅՅԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԻ» անունով աշխարհ գողորեց (':):

Դառնանք պարոններ, դառնանք սըլսալ և անել ճամբէն, մանաւանդ թողունք և ի բաց վանենք մեր տնաքանդ կիրքեր, գիւրին է կործանել բայց գիւրին չէ շինել:

Յառաջիկայ կիւրակէ կեդր. ժողովոյ մէջ Վարժապետանոցի փակման կամ շարունակութեան վճիռն արտասանուի պիտի. նորք որք ընկերութեան գոյութեան կամ յարատեւութեան կըլճան, ի հարկէ սոյն նստին ներկայ գտնուելով պիտի համակերպին Տնօրէն ժողովոյ խոհեմ յայտագրին, և մեք աւելի պիտի ունենանք գիտելու թէ ո՞րք են որք քանի մը պարզամիտ և բարեմիտ անձեր իրենց կողմը շահելով, այսօր իսկ նոր և

մահացու վէրք մը տալ կը նկրտին ընկերութեան, Վանայ Վարժապետանոցի փակման ընդդիմանալով «պարադայներէն օգուտ քաղելու նպատակաւ»:

22 նաւասարդ 4374 Խ. Յ. Ս.

ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐԵՐ

Ղալաթիոյ դրամատեսարց և Օսմանեան արժեթղթատեսարց փոխանորդներուն միջև համաձայնութիւն դոյացեր է. կըսուի թէ անուղղակի տրոց վարչութենէն Ղալաթիոյ դրամատեսարց տըրուելիք տարեկան գումարը զանազան արժեքներու բաժնուելով հրապարակ պիտի հանուին, և յիշեալ արժեքներուն ատկոսը ու դրամագլուխը անուղղակի տրոց հասոյթով պիտի ապահուուին:

Իսկ Օսմանեան պատուիրակաց և փոխանորդներու միջև եղած բանակցութիւնը տակաւին կը շարունակէ, դեմուարութիւնը երաշխաւորութիւն տալուն վրայ է միայն. օսմ. պատուիրակները Պուղարիոյ տուրքը, մաքսատան տուրքը բարձրացնելով դոյանալիք գումարը և Բաթէնթի տրոց հասոյթը կը ցուցնեն փոխանորդներուն, սակայն կերևի թէ ասոնք յանձն չեն առնուր առ այժմ՝ լոկ անուանական եկամուտները իբր երաշխաւորութիւն ընդունել: Ասկէ զատ Բ. Գուռը կուզէ Ռուսիոյ հատուցուելիք տուգանքը արժեթղթոց խնդրոյն հետ կցել և կարգադրել, սակայն փոխանորդները չեն ընդունել: Նախարարական ժողովը այս խնդրոյն վրայ նիստ մը ըրաւ երէկ, բայց արդիւնքը տակաւին չգիտցուի. օսմանեան պատուիրակներն ալ նիստ մը ընելով տրուելիք եկամուտներուն բարուք վարչութեան վրայ ծրագիր մը շինելու զբաղեցան:

Բ. Գուռը տէրութեանց գետպաններուն չըջարեւական մը զրկած էր օտար թղթատարութեանց բարձման համար, դեսպանք ալ սոյն չըջարեւականը հանդերձ գիտողութեամբ տէրութեանց հաղորդած էին, տէրութիւնը Բ. Գրան պահանջման իրաւունք տալով հանդերձ, պատասխաններ են թէ Օսմանեան թըղթատարութեան ներկայ անբաւական վիճակին մէջ օտար թղթատարութիւնները առ այժմ Օսմանեան հողէն բառնալ անհնար է:

Անգղիական գետպան լորտ Տիւֆրին երէկ Վեհ. Սուլթանին ներկայացաւ:

Ղարիսա Յունաստանի յանձնուած ըլլալով, տեղոյն հրամանատար Լետհէմ փաշա երէկ մայրաքաղաքս վերադարձաւ. Վօլօղի հրամանատար հաճի Բաշիս փաշա ալ նոյնպէս այս օրերս պիտի վերադառնայ, վասն զի Վօլօղի զինուորական ամբարանոցները բոլորովին պարպուել են, և զայն ալ Յունաստանի յանձնելու համար պայմանաժամին կը սպասուի:



ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԿՐԹԱԿԱՆ, ՏԵՍՉՈՒԹԵԱՆ ԱԶԳ. ԿԵՂԻՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Կրթական Տեսչութիւնն նկատելով որ կր. գտնուին այնպիսի կրթական ընկերութիւններ՝ որոնք ցարգ ըստ օրինի վաւերացեալ չեն, հետեւեալ հրահանգը հրատարակել որոշած է:

1. Թէ՛ ի Պօլիս և թէ՛ ի գաւառս գրտնուած Ազգ. կրթական ընկերութիւնք պարտին իւրեանց կանոնադրը ներկայացունել Տեսչութեանս ի վաւերացումն. Կ. Պօլիս գտնուողները ներկայ թուականէս մինչ երկու ամիս և ի գաւառս գրտնուողները մինչ չորս ամիս պայմանաժամաւ:

2. Նախորդ Ուսումնական խորհրդոց կողմէ վաւերացեալ ընկերութիւնք ալ պարտին ըստ առաջին յօդուածոյ ներկայ հրահանգի դիմել Տեսչութեանս:

3. Ի լրանալ պայմանաժամին անվաւեր և վստահութեան ոչ-արժանի պիտի հրատարակուին այն ամէն կրթական ընկերութիւնք որք ներկայ հրահանգի 4 և 2րդ. յօդուածոց չեն համաձայնած:

4. Որ և իցէ ազգային անհատ կամ պաշտօնական մարմին երբ Ազգ. կրթական ընկերութիւն մը կազմելու դադար յղանայ, պարտի ամէն գործողութենէ առաջ դիմել Տեսչութեանս գրքասր կերպիւ և իւր նպատակն յայտնել:

5. Ներկայ հրահանգն գործադրութեան գրուած է տարւոյս սեպտեմբեր ամսոյ սկիզբէն:

2 սեպտեմբ. 1881 Կ. Պօլիս (Կնիք)

... Տէր

Միացեալ ընկերութեանց կեդրոնական ժողովը պիտի դուժարի յառաջիկայ կիրակի՝ սեպտեմբեր 6/18, Ղալաթիոյ կեդրոնական վարժարանին մէջ, Օրակարգ ունենալով,

«Առաջարկ Տնօրէն ժողովոյ վանի վրայ վանայ վարժարանանոցին» (չարունակութիւն վիճարանութեան):

Կը խնդրենք Ձեր մեծապատուութեանէն որ հաճիք կատարել ձեր երեսփոխանական պաշտօն, ներկայ գտնուելով անպատճառ սոյն կարևոր նիստին:

Ատեանը պիտի լացուի ճիշդ ժամը 6ին:

Ի զիմաց Միացեալ Ընկ. կեդրոնական ժողովոյ

Գ. Ատենադպիր Նախագահ

Հրանտ Ասատուր Ա. Ա. Տիրբի

1. սեպտ. 1881

Կ. Պօլիս

ԱՆԳՂԻՆԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՅՈՒՄՆ

Խօսիլ, կարգալ, գրել. վից պմսուան մէջ, ամեն օր մէկ մէկ ժամ գասատուութեամբ հետեւեալ տեղերը, հետեւեալ ժամերու մէջ.

Ուղուն չարչուի մօտ Սէրասկէրի ճատէն Միքայէլ աղային ընթերցարանը առաւօտուն ժամը 12ը և 3ը րօպէ անցած.

Միքայէլի իսկէլէսին թիւ 72 մաղազան ժամը 3ին.

Փըչընի փողոց թիւ 38, իզական սեռի համար ժամը 8ին.

Նիչանճի Սուրէնեան վարժարան ժամը 9ին.

Փըչընի փողոց թիւ 38 արական սեռի համար գիշեր ժամը 2ին.

Դասատուութեան պայմանաց համար պէտք է դիմել Ուղուն չարչուի գլուխ Փրէնկեան գրատուն թ. 362:

Բ. Վարդուկեան

Ս. Ձ Դ

Սիկարի թղթին ընտրեալոյնն է՝ Ռոպէնսօն անուանեալ Պրազիլիոյ թուղթը, որ կը գտնուի Տէմիրգարուլեան եղբարց վաճառատներն ի Ղալաթիա և ի Պօլիս, և Ֆրէնկեան գրատունն:

10-9

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԱՌՈՂՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱՌՍՂՆՈՐԳ ՍՈՒՆ ԵՒ ԿՆՈՁ

Հեղինակ Տօքթօր Լ. Գլէման Բարիզի բժշկական ճեմարանէն. թարգմանեց 1877ի տպագրութենէն Ե. Արմաւիր:

Թէ՛ ինչ պէտք է գիտնան ամուսնացողք իրենց ամուսնութեան նախընթաց օրը. — Ինքզինք սիրցնելու միջոցները. — Ամուսնութեան ազգեցութիւնն ամուսնոց ֆիզիքականին և բարոյականին վերայ. — Ծննդական գործարանաց առողջաբանութիւն. — Անկարողութիւն և իւր գարմտները. ևն. ևն:

Սոյն խիստ օգտակար գիրքը որ թէ ամուսնացելոց և թէ ամուսնութեան պատրաստուողներու ընթերցման անհրաժեշտ է կը ծախուի ամէն գրավաճառի քով. Գին 8 զուրուշ:

Ս. Ձ Դ

Գումարու Հիսար տիպի Աճէմ տաղի կոչուած տեղը «Միութիւն (Ինօսիս)» անուն ծովեղերեայ համալգային զբօսարան մը բացուած է ուր թէ եւրոպական և թէ տաճկական նուազածուներ կը նուազեն ուրբաթ, շաբաթ և կիրակի օրերը:

Յաճախորդք թէ ծովեղերեայ գիրքին, թէ բնագիտաց մարտութեան և թէ հանգստութեան մասին շատ գոհ կըլլան: Ուղղոր կրնայ փորձել:



ՊԱՃՃԵՊԱՆ ՕՂՈՒԻ ՎԵ ԳՈՒՄ. Ստամպոլի լիզա փաշախան Ե: 3

ԳՈՐԾԱՐԱՆ ՍԻԿԱՐԻ ԹՂԹԻ

Ս. Ղ. ՊԱՐՏԵՂՊԱՆԵԱՆ ԵՒ ԱՆԿ ԲԻԶՍ. ՓԱՇՍ. ԽԱՆ Թ. 3

Այս անուամով նոր գործարան մը բացուած է Բիզա փաշախան թիւ 3 սենեակը, ուր կը պատրաստուին խիստ մեծ խնամով և աման դնով ամէն տեսակ աղիւ թուղթ Վարսիլիայէն յատկապէս բերուած ընտիր տեսակաց վրայ:

Գործարանիս վարչութիւնը պատրաստ է մայրաքաղաքս զանազան դասի ստանալու հետ բանակցիլ և անոնց ուղած տեսակաւ թուղթ պատրաստել. նոյնպէս պատրաստ է գաւառներէն այս մասին յանձնարարութիւններ ընդունիլ և որոշեալ ժամանակին յանձնել, ինչ քանակութեամբ որ ուղեն:

Վարչութիւնս սոյն ձեռնարկութեան հետ բարեկրթութիւնն ալ միացնել ուղերով, որոշած է վաճառման արդիւնքին 3 առ 0,0 ը Ազգ. Հիւանդանոցին և Միացեալ ընկերութեան նուիրել կէս առ կէս:

Վարչութիւնս կը յուսայ որ ճաշակի տէր և աղային կարևոր հաստատութեանց նը պատկուր փախաք ունեցող աղայինք պիտի փութան առեւտուրի փորձ մ'ընել սոյն գործարանին հետ, զորս ըստ ամենայնի գոհ ընելու համար ջանք և աշխատութիւն չպիտի պակրկն:

Կը ծախուի ամէն ծխալաճառաց, քով և կեդրոնատեղին է Բիզա փաշախան թիւ 3 սենեակը Ս. Ղ. Պարտեղպանեան և Ընկ. Գործարանը:

ՅԱՆԿ ԳՐՈՑ Ի ՏՊԱՐԱՆԻ Ե. Ս. ՏՆՏԵՍԵԱՆ

Ղ. Փոյ

Վարժութիւն ձայնաւոր մանկանց 6

Նկարագիր երգոց հայաստանեայց եկեղեցոյ 3

Օստիանու քերթուած 2

Ո՞վ է մեղաւոր կանանց վերա-

բերեալ 1 20

Հանգուցեալ Պ. Ե. Մ. Տնտեսեան տպարանէն իւրոյ ընծայուած վերոյիշեալ գրքերը կը վաճառուին իրենց գիներովը հատով առնողի համար. իսկ 10 ուլ առնողի ղեղչ կը լինի:

Կեդրոնատեղին է Պահճէ քաղաք մաքսատան կարգը կամուրջի մօտ Ս. Յ. Փափաղեան գրատունը. թիւ 56:

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ՅԱՓԵՆՍ ԵՒ Ի ՉՄԻՒՈՒՆ

Հանգերձ գիտողութեամբ նկարագրեաց Յ. Գուրգէն.

Պատմական տեղեկութիւններ պարունակող ընտիր գրքոյ մ'է խիստ յարմար գալրոցական պարզեւարաշխութեանց որոյ 50 օրինակին գինը Ս. Փրկչի Ազգ. Հիւանդանոցին յատկացեալ է:

Կը ծախուի բոլոր գրավաճառաց քով իգին 6 զուրուշ:

Կեդրոնատեղին է Արամեան գրատունը:

ԳՈՐԾԱՐԱՆ ԵՆՆԻՃԷՄԻՍԱՒՈՏԻ

ԳՕՆԹԻ ԵՂԱՐԱՐ ԵՒ ԵԱՃԻՆԻ 109 Ղալաթա. Սանտրոգըլար փողոց 109

Ստորագրեալքս առեւտրական ըլոր պատասխանատուութիւնը մեր վրայ առնելով Գօնթի եղբարց և Եանիքի հետ ընկերութեամբ Ղալաթիոյ Սանտրոգըլար փողոցը թիւ 130 գործատունն հաստատուելու ի վեր արժանապէս քաջալերուեցանք պատուարժան յաճախորդաց բազմութեան և Ամէն ոք լաւ դնանատեց մեր գործարանէն կրած ծխախոտին ընտրութիւնը տեսակներու համեմատութեամբ. ուստի և մեզ հարկ եղաւ, աւելի ընդարձակ ասպարէզ մը տալ մեր գործատուութեանց:

Եւ նախ մեր գործարանն ու վաճառատունը փոխադրեցինք առաջնոյն զիմացը 109 թիւ շէնքին մէջ, և իւր անհամեմատ ընդարձակութեամբ խիստ յարմարութիւն ունի թէ մայրաքաղաքս թէ գաւառներէն և թէ օտար երկիրներէ կրած բազմաթիւ հրամաններն յոյժ գոհացուցիչ կերպիւ և փութով կատարելու:

Երկրորդ ծխախոտի բերքն արտադրող ամեն կողմ և մասնաւոր յէնիճէ յատուկ գործակալներ կարգելով սկսած ենք մասնաւոր խնամօք պատրաստել տալ բերքը և ահա այս խնամոց և գոհողութեանց շնորհիւն է որ այսօր ամենընտիր և հոտաւէտ ծրխախոտներ կարող ենք մատակարարել նաեւ 130 նոց, 200 նոց և 300 նոց և աւելի բարձր գիներով ըստ տեսակին:

Այսուհետեւ ոչ ոք պիտի վարանի իւր ճաշակին յարմար ընտիր ծխախոտ գտնելու մասին, բաւական է դիմել մեր վերոյիշեալ գործատունն ի Ղալաթիա Սանտրոգըլար փողոց թիւ 109, և կամ ամեն ծխալաճառաներէ խնդրել մեր գործարանէն կրած ասպարաններէն:

Ծան. Օտար երկիրներէ ասպարէզ ուղղունը կը մասնակցին այն միջադրոյսին, զոր ունիմը կայսերական կառավարութեանէն, որ է պանարօլի տուրքէն ազատ ըլլալ, որով 0/0 կն 20 չափ կունենան:

Վաճառատուներն են. Ղալաթիա Սանտրոգըլար թիւ 109 2ընտան գարու 2էօմէկիճիէր » 29 Էմին-Էօնիւ » 56

ՏԵՄԻՐԳԱՓՈՒԼԵԱՆ ԵՂԱՐԱՐ

ՏԵՐ-ԽՄԲԱԳԻՐ Մ. Յ ՄԵՆԻՔԵԱՆ